

«Թարգմանություն»

ԹԱՆԿԱԳԻՆ ՄԱՐԻԵՏԱ ՍԵՐԳԵՆՎՆԱ

Գրում է Ձեզ Եղիշե Չարենցը:

Գրում եմ Ձեզ երկրորդ անգամ. ինձ հետ կատարված պատմության մասին առաջին անգամ մանրամասներեն Ձեզ գրեցի երեկ չէ առաջին օրը՝ վերջում խնդրելով, որ ինձ պաշտպան կանգնեք և, եթե հնարավոր է, այդ ամենի մասին տեղյակ պահեք ընկ. Ստացկուն և, եթե հնարավոր է, ընկ. ՄԱՏԼԻՆԻՆ: Գրեցի նամակը, նորից կարդացի, առանձին էջերի վրա լրացումներ արեցի և մտածում էի նամակն արդեն ուղարկել Ձեզ, բայց վերջին պահին, ինձ համար առանձնապես դժվար ընթացք ունեցած հանգամանքների բերումով, Ձեզ հասցեագրած նամակին գրեցի փոքր նախաբան, այդ ամենը տեղավորեցի մի ծրարի մեջ և օդային փոստով ուղարկեցի ուղիղ... ընկ. Ստալինին!!-Այդ ամենը Ձեզ ամբողջովին պարզ ու հասկանալի կդառնա, երբ ստորև կծանոթանաք այն «գործին», որը հետևյալն է.

Ես դժբախտություն ունեցա գրելու բանաստեղծությունների ուպոեմների նոր գիրք՝ 300 էջ, «Գիրք ճանապարհի» ընդհանուր վերնագրով,- մեր ժողովրդի անցյալի, ներկայի և ապագայի մասին, այն հիմնական գաղափարով, որ ոչ մի իշխող դասակարգ մեր ժողովրդին անցյալում չի տվել դրական պատմական գաղափար և միայն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո պրոլետարիատը մեզ տվեց այդ գաղափարը: Մա, այսպես ասած, գրքի հիմնական հայեցակարգն է, որի մեջ, բացի անցյալին վերաբերող բանաստեղծություններից, կան նաև բանաստեղծություններ՝ նվիրված հարվածայիններին, կոլտնտեսականներին, ընկ. Ստալինին և այլն: Եվ ահա հենց այս գիրքը մարդիկ իրենց նաիրյան կուրությամբ և ատելությամբ հայտարարեցին նացիոնալիստական, դաշնակցական, և... ընկ. Խանջյանի բացակայության ժամանակ, երբ գիրքը, վաղուց արդեն տպագրված, արդեն պիտի լույս տեսներ, բռնեցին և Կենտկոմի քարտուղարության անունից արգելեցին որպես հակահեղափոխական, իսկ ինձ էլ, առանց պատճառների որևէ բացատրության, դուրս վճռեցին պետհրատից. գործի փաստական կողմին պետք է ավելացնել նաև հետևյալը. իմ գրքում կա դրամատիկական մի ինտերմեդիա, որտեղ թատերական աշխարհի պայմանական կերպարներով գեղարվեստորեն ցույց եմ տալիս և ապացուցում, որ համաշխարհային պրոլետարական հեղափոխության առաջադիմական առաջընթացի օբյեկտիվ մարմնացումը Ստալինն է, և Տրոցկին, չհասկանալով տվյալ պատմական փուլի մասսայական բնույթը, և, որպես «հերոսական» անձնավորություն, իրեն հակադրելով հեղափոխության ամբողջ դրական ընթացքին, անխուսափելիորեն պետք է զոհվեր և այդ մասսաների աչքում բուտաֆորային «հերոսից» պետք է վերածվեր ծիծաղելի, խեղճուկ ֆիգուրի, ծիծաղելի թատերական գործող անձի՝ «Պյերոյի». երկ այդ պատճառով էլ կոչվում է «Աքիլլե՞ս, թե՞ Պյերո»: Եվ ահա այդ երկը, ի հավելումն վերը ավելացրածի, մեր բթամիտները խորամանկորեն իրենց պաշտոնական որոշման մեջ հայտարարել են... տրոցկիստական երկ՝ ուղղված... մեր առաջնորդ ընկ. Ստալինի դեմ!!! Չե՞ որ կարելի է խելարագվե՞լ, այնպես չե՞, ինչ էր մնում ինձ անել, եթե ոչ գրել

ընկ. Ստալինին և պահանջել այդ նենգ, կեղտոտ, ոչ մի արդարացում չունեցող գործի վերաքննություն: Բայց սա դեռ բոլորը չէ: Բանն այն է, որ այդ գիրքը ԱՄԲՈՂՁՈՒԹՅԱՄԲ, դեռևս ձեռագիր, կարդացել է ընկ. Խանջյանը, և հիմնական մասով- Աշրաֆյանը: Եվ ի՞նչ: Խանջյանի արձակուրդ մեկնելուց հետո՝ սույն Աշրաֆյանը գերագույն կուսղեկավարության մի քանի անդամների հետ մտածում են հեղաշրջում անել, դեկավարության փոփոխություն. սկսեցին ազիտացիա մղել Խանջյանի դեմ և ամեն ինչ ավարտեցին նրանով, որ իրենց ազիտացիայի կենտրոն դարձրին իմ գիրքը, ինչի համար էլ այն հայտարարեցին հակահեղափոխական՝ ուղղված ընկ. Ստալինի դեմ (հոգեբանությունը լրիվ նաիրյան է, այսինքն՝ ինչքան սարսափելի, իբր, այնքան լավ): Այս ամենը նրանք հարմարեցրին ընկ. Ստալինի պատմական նամակի 2-րդ տարելիցի օրվան, հրավիրեցին Երևանի կուսակցի վր, սույն Աշրաֆյանը տվեց իր զեկուցումը և ակտիվի գերեզմանային լռության մեջ հանեցին միտք մթագնող որոշումը: Բայց այս բոլորն ավարտվեց իսկական նաիրյան համաժողովրդական շփոթվածությամբ. վերադարձավ Խանջյանը, հեռացրեց Աշրաֆյանին, Երևանի ակտիվի որոշումը համարեց սխալ, Կենտկոմի որոշումը պետհրատի և իմ գրքի մասին՝ վերանայման ենթակա: Մի խոսքով, ոչ թե քաղաքականություն, այլ խայտառակություն, կուսակցության և խորհրդային իշխանության լրիվ և անամոթ վարկաբեկում: Այժմ մտածում են լույս ընծայել իմ գիրքը. այն մաս առ մաս բառացի թարգմանել են ռուսերեն, Անդրերկրկոմի կուլտպրոպագոստիկա ընկ. Սեֆի գլխավորությամբ ստեղծել են հանձնաժողով, որը, իմ ինտերմեդիան կարդալուց հետո, զարմացել էր իրենց խմբական նպատակների համար ստեղծագործությունը ոտքից գլուխ շուռ տված մարդկանց լկտիության վրա, որ երկը բացահայտորեն գրված մեր բոլորի կողմից աստվածացված ընկ. Ստալինի փառաբանության համար, Կենտկոմի կողմից հրապարակավ հայտարարվել էր նրա դեմ ուղղված երկ... Ի՞նչ է սա, ընկ. Մարիետա Շահինյան, եթե որ խայտառակություն և ծաղր ու ծանակ՝ թե՛ 20 տարվա ստաժ ունեցող խորհրդային գրողի, թե՛ կուսակցության ու նրա առաջնորդ ընկ. Ստալինի հանդեպ: Պե՞տք է արդյոք մարդիկ պատասխան տան իրենց նենգ գործերի համար. չե՞ որ սա խաղ է գրողի կյանքի ու հեղինակության հետ, կուսակցության և իշխանության վարկաբեկում և այն էլ՝ այնպիսի՛, ինչն չէին կարող սարքել և հորինել նույնիսկ մեր դասակարգային թշնամիները: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ ապրումներ ես պիտի ունենայի այդ օրերին. չե՞ որ ես կարող էի սպանել և՛ ինձ, և՛ իմ ընտանիքը, խելագարվել, և ես զարմանում եմ, թե ինչու դա չարեցի: Պետք է Ձեզ ասեմ, որ նրանք իմ գրքի հետ մեկտեղ արգելել են մի շարք այլ գրքեր՝ Մ. Արմենի «Երևան» գիրքը՝ տպագրված 2 տարի առաջ և բավականին անվնաս, ինչ-որ ագրոնոմի գիրք, նախկին բատրակ Աղաջանյանի և այլն- բոլորն այս բնույթի. ամբողջ մեր խորհրդային մտավորականությունը այդ օրերին ցնորվածի նման էր, վախեցած իր գրխի համար. բացահայտորեն վայրի, անիմաստ տեռորի հոտ էր գալիս, որի նմանը չէք գտնի խորհրդային Միության ոչ մի վայրում: Իմ առաջին նամակը, գրված Ձեզ և ուղարկված ընկ. Ստալինին, իր վրա կրում է այդ սարսափի բոլոր հետքերը, այն համարյա պաթոլոգիկ էր Sos-ի ազգականչերով: Դա 2 օր առաջ էր, երբ օդի մեջ դեռ կախված էր ամբողջ կատարվածի անուղղելիությունը: Դե, հիմա էլ ոչինչ արված չէ ըստ էության. իմ գիրքը դեռևս լույս ընծայված

չէ, և ես դեռևս վերականգնված չեմ պետհրատում: Թե ինչի կարող են հասնել մեզ մոտ իրենց հիմար բթամտությամբ՝ կարող եք պատկերացնել հետևյալ փաստով. այս «սարսափելի» օրերին որպես քաղվերահսկիչ Կենտկոմից մեզ մոտ՝ պետհրատ ուղարկված Սահակ Կիրակոսյանը որպես իդեալիստական գիրք... արգելեց... Գոգոլի «Տարաս Բուկրան»... Իսկ ինչ վերաբերում է հայ դասականներին՝ ապա նրանք համարյա բոլորը իմ գործի համեմատությամբ «մանրուքներ» են. սա նման է Բեյլիսի գործին, և ես համոզված եմ, որ ընկ. Ստալինը այս գործի բոլոր մեղավորներին կհանի ջրի երես. ես նրան, ինչպես տեր Աստծուն, վստահում եմ և խնդրում, աղաչում եմ Ձեզ, ընկ. Շահինյան, օգնեք մեզ այդ գործում: Սա ուղղակի հաղահեղափոխական դիտավորություն է. իրենց խմբակային քաղաքական նպատակների համար 20-ամյա գրողին, որոնցից 15 տարին նա նվիրել է Խորհրդային իշխանության, Հոկտեմբերի և նրա առաջնորդների՝ Լենինի և Ստալինի փառաբանությանը (միայն իմ վերջին 5 գրքում գործ է նվիրված ընկ. Ստալինին) և ահա այդպիսի գրողին անվանել հակահեղափոխական, գործին կառնել առաջնորդի սրբազան անունը, պաշտենական փաստաթղթերում Կենտկոմի անունից հայտարարել, թե տվյալ գրքում պայքար է մղվում Առաջնորդի դեմ- իսկ հետո, կարծես ոչինչ չի պատահել, թույլ տալ այդ գիրքը- չէ՞ որ սա հակահեղափոխականություն է, Կուսակցության և Առաջնորդի վարկաբերում, խորհրդային գրողի խայտառակություն, նրա վերածում իրենց խարդավանքների գործիքի: Այդ «արյունոտ» պատմության հերոսներից մեկը առանց որևէ ամոթի ասում էր ինձ այդ «սարսափելի օրերին». «Մի՞ թե դու չես հասկանում, որ հարցն ըստ էության քեզ չի վերաբերում»... Այսինքն՝ համբերի՛ր, թող ամբողջ ժողովուրդը, որպես հակահեղափոխական, թքի՛քո ռեխին, իսկ հետո, երբ մենք հաղթենք, քեզ համար լավ կլինի... Ի՞նչ կարող է լինել ավելի ցինիկ, ընկ. Մարիետա: Իսկ Աշրաֆյանը, իմ գիրքը հակահեղափոխական անվանելուց հետո, Կոմկուսի Կենտկոմի անդամ ընկ. Թաթարյանին ասել է. «Ոչինչ, մենք հետո ընկ. Չարենցին կվերականգնենք կուսակցության մեջ...»:

Ինչ է սա, ընկ. Մարիետա, եթե ոչ բեյլիսիադա՝ կաշառումներով և «կամավոր գոհերով»... Բայց հանուն ինչի՞: Որպեսի Աշրաֆյանը դառնար 2-րդ քարտուղա՞ր... Հանուն դրա կեղտի մեջ տրորել խորհրդային գրողի Պ, առաջնորդի անո՞ւնը, վարկաբեկել կուսակցությունը և խորհրդային իշխանությունը: Սա արդեն հրեշավոր է, ընկ. Շահինյան! Ես բողոքում եմ դրա դեմ!! Եվ աղաչում եմ. բոլորին տեղյակ պահել այս բեյլիսիադան: Չէ՞ որ Դուք համամիութենական գրող եք՝ համաշխարհային անունով: Ձեզ ճանաչում են բոլորը: Օգնեք ինձ: Ձեզ երևի կկանչեն ՀամԿ(Բ)Կ Կենտկոմ, քանի որ Ստալինին ուղղված նամակում զետեղված է Ձեզ հասցեագրած իմ նամակը: Ձեզնից շատ բան է կախված: Թախանձանքով դիմում եմ Ձեզ. Եղեք ինձ համար մի նոր Էմիլ Զոլա: Չէ՞ որ սա նմանը չունեցող պատմություն է: Չէ՞ որ սա վարկաբեկում է Կուսակցությանը և Խորհրդային իշխանությանը: Դուք պետք է պաշտպան կանգնեք այս պատմությանը, ակտիվորեն խառնվեք այս գործին, այս գործը դարձնեք ամբողջ Միության, ամբողջ Խորհրդային հասարակության սեփականությունը: Այդ կարող եք անել միջայն Դուք:

Միրելի ընկ. Շահինյան! Ծանոթացեք այս նամակի բովանդակությանը ընկ. Ստացկուն: Գուցե այնպես պատահի, որ Դուք ներկայանաք նույնիսկ ընկ. Ստալինին:

Մի լքեք ինձ և այդ գործը. չէ որ սա իմ անձնական գործը չէ, այլ, հիմնականում, Կոմունիստական Կուսակցության և Խորհրդային Իշխանության:

Իմ գիրքը Ձեզ կամ Յակով Սամսոնիչին կհանձնի ընկերը, որի հետ ուղարկել եմ գիրքը: Ստիպեք Յակով Սամսոնիչին բառացի թարգմանել Ձեզ ամբողջ գիրքը- և այդ դեպքում դուք կհամոզվեք, թե ինչ կեղտոտ պատմություն խաղացին ինձ հետ: Ես մարդ եմ, չէ՛ Խորհրդային գրող եմ, չէ՛: Չէ՛ որ Դուք եք առաջինը ինձ երաշխավորել համամիութենական ընթերցողին: Ես հույսս Ձեզ վրա եմ դնում, սիրելի Մարիետա Սերգեննա! Դեռևս ոչինչ արված չէ: Դեռևս կարող են ինձ սպանել: Ինձ փոխանցելու համար պատասխանը գրեք Մ. Ս. Սարյանի հասցեով: Ողջունում եմ Ձեզ սրտանց: Նվիրված Ձեզ` և՛ սրտով, և՛ հոգով:

Ձեր դժբախտ գրչեղբայր:

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

1/XII-33թ.

Երևան

Հ. Գ. Այս գործի մանրամասները և անակնկալ փոփոխությունները Ձեզ կհայտնի ընկերը, որը կտա Ձեզ գիրքը: Ընկ. Ստալինին ուղարկված նամակը պետք է որ մինչ այդ հասնի իր նշանակման վայրը: Հնարավոր է Ձեզ կանչեն բացատրության: Այսպես ուրեմն, ես հուսով եմ, որ Դուք ազնիվ եք ու անկեղծ (չէ՛ որ դա Ձեր գլխավոր գիծն է, որի համար Ձեզ գովել է Լենինը- «Փոփոխություն») ... Սիրելի Մարիետա Սերգեննա, իմ ճակատագիրը ոչ միայն որպես մարդ, այլև գրող, կախված է Ձեզանից: Շատ բան կախված է Ձեր ակտիվ պաշտպանությունից: Չէ որ ինձ ոչ ոք չի ճանաչում: Իսկ Ձեզ ճանաչում է ամբողջ աշխարհը: Օգնեք կրոսեր գրչեղբորը:

Այս փոքր նախրյան աշխարհում ես շատ թշնամիներ ունեմ: Առանց Ձեր ակտիվ պաշտպանության նրանք ինձ կուտեն: Դուք ավելի լավ եք պատկերացնում մեր երկրի ամբողջ հետամնացությունը: Չէ՛ որ Ձեզ նույնպես ուզում էին կործանել, բայց նախրյան աղիքը շատ նեղ գտնվեց այնպիսի մեծ մարդու համար, ինչպիսին Մ. Շահինյանն է: Բայց ինձ կարող են կործանել շատ հեշտ: Դուք դա ինձանից լավ եք հասկանում: Այդ իսկ պատճառով շատ եմ խնդրում, հանուն այն լավ վերաբերմունքի, որ Դուք առ այսօր ցուցաբերում եք մեր մշակույթի և գրականության մեջ ամեն մի արժեքավորի հանդեպ, օգնեցեք ինձ! Եվ կրկին, վերջին անգամ, աղաչում եմ. օգնեցեք ինձ!

ՉԱՐԵՆՑ

